

ՊԻՋՄԱՐՔԻ ԳԼՈՒԽՆ

Ճշդիւ չափեց Պիզմարքի գլուխը Շաքէր հոշակաւոր քանդակագործն՝ որ վերջին տարիներն՝ արքունական մեծ Ատենադպրին ի Քոյունիա կանգնած արձանը քանդակեց։ Այսպիսի չափերու վրայօք գերմանացի մարդաբանք սոսկ գիտական կերպով հետաքրքրական տեղեկութիւնք տուին։

Պիզմարքի գլխոյն չափն է 212 հազարորդամետր. մէկ ջուռէն մինչև միւսն՝ լայնութիւնն է 170 հազարորդամետր. իսկ մինչև հիմա երեւելի մարդկանց ամենէն մեծ գլխոյն չափն է 205 հազարորդամետր 162 ի վրայ։ Պիզմարքի գանկը ըստ գիտական դրութեանց հայուոյն, ունէր 1965 հարիւրորդամետր տարածոց 1867 կրամ կշռով. որով կը գերազանց բոլոր երեւելի մարդկանց գանկերը։

Փանդի ուղեղն 1050 կրամ կը կշռէ. Շիլլէրինը 1580. Տանդէինը 1420. Պայրէնին 1807. իսկ Քիւլիէին, որ աշխարհիս ամենամեծ ուղեղներէն մին է, 1830։



ՊՏՈՅՏ ՄԸ



ԱՅՈՐ՝ ուրիշց ուր՝ պիտի հրաւիրեմ՝ Բագմաշկայի ընթերցողները քանի մը վայրկեան, եթէ հաճին, ընկերելու հետս մտօք՝ եթէ երբեք ունեցեր են Աղբիականի Դշնոյն այցելութիւն մը տուած բլլալու բախտը, եթէ չեն ունեցեր՝ երեւակայութեամբ։

Նստինք կոկիկ կոնտոլայ մը՝ երկու միւր նաւալարներով, որոնք տեսած նաւակնին անցնելու սովորութիւնն ունենան։ Երկըննանք զեպ ի Մեծ Զրանցքին կոր գեծը, չուշանանք չի տոտնանք զքսերու պալատին, սուրբ Մարկոսի առջև, նոյնպէս ականարկ մը միայն ձգենք Սալուդէն և Սան Ճիօրձիոյ եկեղեցեաց վրայ, բայց մէկ կողմէն երթալով, վասն զի

ծամը մէկին կը մօտենայ, Երկու կողմերնիս անտառ մը պալատներու, զոհարներու՝ զորս ճարտար ձեռք մը իրարու ջով զետեղեր՝ կապեր՝ շարեր է։ Առուայտի ձեռով կամարանիկն պատուհաններ, ծաղկանման և վարգաձև զարդերով վրուագեալ պատշգամներ, զոթացի մարմարեայ ժանեակներ, եռակարգ սիւններ՝ զործ Վերածնութեան, ճոխապաճոյց և ողորկ պորփիրք և օձաքարինք կը զօռտեն աչքդ։ Մէկ կողմէն շոգնաւուց, միւս կողմէն կոնտոյաներու անպաղար երթեկը, վասնզի կիրակի է, զոյնզոյն ջրերը կը ծածանցընեն, և պալատներու ականակալալ շղթայն ծփփուռն ալեակներուն հետ կոհակաւ կը ճօճայ։ Որոնք արդեօք աւելի մուղական են, պալատները, թէ ծովը, թէ արեւը՝ որ կը ցոլայ կապուտակ հայելոյն մէջ։ Բայց ահա նաւակը ափունք կը դիմէ, հաւաքուած ամբոխը՝ արդէն բան մը կը զուշակէ։ Նաւակէն ելած շեւած մեծ անձնաւորութիւն մը զմեզ կը դիմաւորէ, և ամբոխին աչքն ի մեզ կը դառնայ։ Գեղեցիկ շէնք մը՝ արծառի անուանն. մոռննք ներս՝ առանց վախ մ'ունենալու տանիքին վրայ կեցող պեղեցկաբաշ առիւծէն և ոչ ալ իւր վրան նստողէն։ Ելլենք հրաշալի սանդուխներէն վեր, և ահա փառաշուք սրահ մը՝ ուր զգաւական քաղաքին ազնուականք համախմբեր են։ Գլուխնուս վրայ կախուած է ոսկեկուռ ոսկեկիտուած ձեղուն մը՝ ոսկեփետուր հողաթեւեան հրեշտակներով. կողմակի՝ բիւզանդական ոսկեքանդակ խորանիկներ ոսկեզոյն նկարներով կը պնծազարդեն որմունքը. իսկ դիմացդ՝ մարմարեայ դրան մը մէջէն նկար մը, նկարէ վեր բան մը, հրաշալիք մը՝ սր կը մտքէ, կը դիմէ, կը վերափոխէ խելքդ ալ, միաքղ ալ, ամբողջ էութիւնդ, մարմինդ ու հոգիդ. դա Գեղեցիկն Վերափոխումն է. հոս է վննականեան արուեստին կեղերոն, ինչպէս կ'ըսէ Դէն, և զուգէ, զգալման կէտն։ Կարծեմ հասկըցար, ո՞վ ընթերցող, ուր տեղ ըլլալիս, ծածկելն այլ ևս աւելորդ է. Գեղեցիկի Դպրութեանց Ակադեմիայն ենք։ Նստինք քիչ մը այս մեծապանծ սըրահին մէջ, և զմայլինք իտալական աստուածային հասնաքներուն հրաշակերտից վրայ։

Բայց ինչ ձայն է որ կը լսուի. իտալական արքունի քայլերգն, որ կախարդուած սրտեւ, բուն՝ երկիային յուզում մը կը պարգեւէ : Եւ ահա ներս կը մտնեն Քաղաքապետին ներկայացուցիչը, Ակադեմիային նախագահը, տեսուչը և շատ բրոֆեսորներ. Միլիթարեանց

Աբբայն՝ Գերպ. Իգնատիոս վ. Կիրեղեան արդէն բազմած է՝ իրեն համար որոշեալ բարձր տեղ մը, հրաւիրեալ Ակադեմիային տեսչէն հետեւեալ նամակով, զոր թերեւս կ'ախորժես կարգալ :

R. ISTITUTO DI BELLE ARTI

IN VENEZIA VENEZIA, LI 4 AGOSTO 1898

Eccellenza !

Dappoichè parecchi giovani, appartenenti alla nazione Armena, frequentarono nel passato anno scolastico, con tanta lode, questo R^o Istituto, da ottenere delle prime premiazioni, credo sarà cosa gradita per la E. V. assistere alla consegna, fatta dal rappresentante del Governo, a quei bravi giovani, delle meritate corone.

Prego pertanto la E. V. di voler onorare col Suo intervento la lieta cerimonia ; ciò che varrà anche a rendere certo, pei premiati, più solenne la festa, più pregevole il guiderdone.

E nella speranza che la mia preghiera venga esaudita dalla E. V. ringrazio vivamente, e godo che una occasione mi si presenti, per rassegnarle le proteste di venerazione ed ossequio profondo.

IL DIRETTORE DELL' ISTITUTO DI BELLE ARTI DI VENEZIA

ANTONIO DAL-ZOTTO

A S. ECCELLENZA
Mons. Ignazio D^r. Ghiurek
ARC. ED ABBATE GEN.
DEI MECHITARISTI

ԱՐԲՈՒՆԻ ՀԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԻԿ

ԴՊՐՈՒԹԵԱՆՆԵ, Ի ՎԵՆԵՑԻԱ

4 04088 - 1898
ՎԵՆԵՑԻԱ

Գերապայտաւ Տէր.

Որովհետեւ շատ երիտասարդներ՝ Հայ ազգաւ, յաճախեցին անցեալ տարւոյ դպրոցական շրջանին մէջ, անչափ գովութեամբ, այս Արքունական Հաստատութիւնը և ստացան առաջնակարգ մրցանակներ, կարծեմ հաճոյական պիտի ըլլայ Ձեր Տէրութեան՝ ներկայ գտնուիլ՝ Կառավարութեան Ներկայացուցչին ձեռք՝ այն կտրիճ երիտասարդաց արժանացած պսակներուն բաշխման հանդիսին :

Արդ, կ'աղաչեմ զԳեր. Տէրութիւն Ձեր՝ որ հաճիք Ձեր ներկայութեամբ պատուել զուարթ հանդէսը, որով յիշատակեալ համար՝ աւելի մեծաշուք կերպարանք մը պիտի առնու այն, և մրցանակներն՝ աւելի մեծ յարգ մը :

Յուսով աղաչանացս Ձեր Գեր. Տէրութեան ընդունուելուն, մեծապէս շնորհակալ կ'ըլլամ, և ուրախ եմ որ այսպիսի առթիւ մը պիտի կարենամ յայտնել Ձեզ խորին յարգութեան և մեծարանացս հաւատարմէր :

ՅԵՍՈՒՆ ՎԵՆԵՑԻԱՅ ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ

ԱՆՏՈՆ ԶԱԼ-ՅՈՂԻՈՅ

ԱՐ ԳԵՐԳ. ՏԵՐ
Տ. ԻԳՆԱՏԻՈՍ Վ. ԿԻՐԵՂ
ԱՐԲԵՂ. ԵՒ ԸՆԴ. ԱՐԱՅ
ՄԻՒԹԱՐԵԱՆՆԵ

Բայց ձայն մ'է որ կը լսուի, նամակ կարգալու զբաղած՝ մոռցանք ուր ըլլալինս։ Այս գիտիայի փարտուղան է, որ կը պարզէ ազնիւ հանդիսականաց Արքունի Հաստատութեան դպրոցական տարելը՝ շնորհ յառաջակի միջոցներէն, որ այժմ յիշուի նոր կեանք տաած կը գործէ։ Բայց ինչիւր ծանօթ անունաց և ձայնից վրայ կը դառնայ։ ուշադրութիւն դնենք։ այս, միայն թողունք որ նոյն այն ձայնը խօսի։

«Պաւստի¹ մրցանակներէն երկուք միայն տրուեցան, մին՝ նկարչութեան, միւսը՝ ճարտարապետութեան։ Երրորդի մրցակիցը չլըտ։ Նուեցան Բայց, այս առթիւ չեմ կրնար մոռնալ թէ ինչպէս արժանացաւ ճարտարապետութեան մրցանակին օտարական մը, Պ. Գարազաշ Կ. պոլսեցի, մինչդեռ, անշահ թիւերու նուագութեան պատճառաւ մրցանակին հաղորդ չեղաւ իւր ազգակիցը, Պ. Պետ. Ոսկեան։

«Այս երկու հայ երիտասարդներն ալ, որոնք ճարտարապետութեան նոյն դասին մէջ նոյնաստիճան առաջին մրցանակ ընդունեցան, ըիչ ատեն է որ սկսած են իրենց ուսումները այս Հաստատութեան մէջ, և շնորհիւ իրենց ջանասիրութեան և խմացութեան, կրցան այնպիսի աստիճան մը հասնիլ աբուստարապետական մշակութեան, որ՝ արուեստին ուսման մէջ Հինցած երիտասարդներէն շատերը կրնային նախանշիլ իրենց։

«Այսպիսի յաջող ելից ձեռնտու եղանակ տարակոյս երկու ամենակարեւոր գործիքներ։ այսինքն է, աշակերտաց բարի կամքը և նոր ուսուցչին քաջութիւնը։

«Ինչ որ ալ ըլլայ, պարտք մ'է Հաստատել թէ այն երիտասարդը², որ կու գան տիրապետութեան այն կատարելաւ Հաստատութենէն, որ է Մուրատ-Ռաֆայէլ Միխ.

Թարեան վարժարանն, գրեթէ միշտ առաջին կը հանդիսանան այն ուսմանց մէջ՝ որոց կը նուիրուին։

«Գոյցես, և մանաւանդ թէ ստուգիւ մարմին մ'է այն ընտրեալ և փութալան երիտասարդաց, որ մեծ պատիւ կ'ընեն, և վեհ դիրքի մէջ կը պահեն աւանդութիւնները, ոչ միայն այն Հաստատութեան ուստի կու գան, այլ նաեւ իրենց ազգին, որ այսպէս արթնցած է հանճարով, և այսպէս, աւաղ, թշուառ։

Հագիւ լմացած ֆարտուղարին ճառը, ծափահարութիւնը կը տեղան ամենուստ, և նուագախումբն ծափից հետ կը խառնէ սրտազարա երգի մը գոլորտի շնչտեղը։ Ահաւորի ուրիշ ճառասուս մ'ալ, բրգիսոր մը Արուեստաբիտական պատմութեան՝ որ նշանաւոր նկարչի մը ներքողը կ'ընէ, անոր հրաշակերտներուն վրայ մի առ մի խօսեցով։ Գործէ պէտ շատ գեղեցիկ՝ սակայն հեղձուցիչ տաքը անտանելի կ'ընէ լսել։ Եւ զայն ես կ'ողջունէ նուագախումբն, և այնուհետեւ առաջին ճառասուն կ'ելլէ բեմը՝ զոհացնելու վերջապէս Հանդիսականաց փափաքը, և վերջ տալու աշակերտաց սրտատրոփին։ Կը կարդայ նա զանազան գեղարուեստից անուններ, և անոնց մէջ քաջ հանդիսացած իտալացիք և իտալուհիք կ'երթան կորզելու բրաբիտը, ընտիրները թողլով Հայ աշակերտաց, որոց սրտի զուարթ թնիչներ կարծես երեսներն ուն վրայ կը կարդացուի։ և ահա կը լսուի։

ՄԱՍՏԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Գ Տ Ա Ր Ի

Առաջին մրցանակ արծաթ միտալով } Պ. Խոսհակ Գարազաշեան Կ. պոլսեցի, }
 } Պ. Պետրոս Ոսկեան }
 } Կ. պոլսեցի։ }

1. Պաւստ և Գորնիներ Թոմազօ, երկու բարերարք են՝ որ յատուկ ստակ ձգած են Ակադեմիային, առաջինը՝ նկարչութեան և քանդակագործութեան, երկրորդը՝ ճարտարապետութեան համար, որ այլ գեղարուեստից վերջին տարւոյն քաջ գնահատուիլ տրուի։ մրցանակը 180 պօնէ ֆր. են։

2. Գարազաշեան՝ Հայ-կաթողիկէ երիտասարդ մ'է որ հոս Անկեստի կ'ապրէր առանձին։

ճարտարապետութեան ուսումն ընելու համար վերադարձաւ ի Կ. Պօլսի ճարտարապետի մը քով մտնելու համար։ Մինչ գեա իւր ընկերն Պ. Պետրոս Ոսկեան պիտի չարունակէ տարի մ'ալ՝ յաճախելով նոյն Հաստատութիւնը, և պիտի ընդունի ճարտարապետութեան Բրոֆեսորի տիտղոսը։ Բացի Գարազաշեանէ և միւսներէ՝ յիշուածը և յիշուելիքները՝ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի աշակերտներն են։

Երափահարութիւնը կը հնչեն ամէն նստա-
բանէ, և հայ ճարտարապետներն կ'երթան
քնդունելու պսակները, զորս Բագաքապետին
քոխանորդը Միխիմարեանց Աբրահօր կը յանձ-
նէ նուիրելու Պսակաւորաց: Հազիւ տեղերնին
գնացած, և ահա կը լսուի դարձեալ.

ՄԲՏԱՆԱԿ ԳՈՐՈՆԻՆԻ ԹՕՄԱԶՕ

Պ. ԻՍԱՀԱԿ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Եւ Պ. Խաճակ Գարազաշեան կ'երթայ
կորդելու և այդ մրցանակը.

Արդէն ամէն հանդիսատես ոտքի ելած է
տեսնելու այդ յանդուգն հայ երիտասարդը,
որ Պօլսէն գալով Հանճարեղ Խոտալացոց ձեռ-
քէն կը շորթէ այդ մրցանակն ալ.

Եես մի քանի ուրիշ անուանց՝ կը լսուի.

ՄԱՍՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Ա Տ Ա Ր Ի

Երկրորդ մրցանակ } Պ. Յակոբ Փափա-
արծաթ միտալով } զեան¹, Պրուսացի:

Առաջին մրցանակ չի կայ. եթէ ըլլար՝
անշուտ նոյն հանճարեղ երիտասարդը պիտի
կորդէր: Գարձեալ կը լսուի.

ՄԱՍՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ա Տ Ա Ր Ի

Երկրորդ մրցանակ } Պ. Եղուարդ Թեր-
արծաթ միտալով } զեան, Կ. պօլսեցի:

Հոս ես առաջին մրցանակ չկայ. իւր
ընկերն ալ երկրորդ մրցանակ կ'առնու:

Մափերուն աղմուկը նուազախմբին զը-
ւարթ շնչոտերուն հետ կը խառնուի, և հան-
դիսականք կը սկսին շարժիլ՝ ըստ սովորու-
թեան՝ դէպ ի Ակադեմիային սրահները,
այցելելու անգամ մ'ալ անմահահունձ հե-
ղինակաց նկարները. մենք եւս, երթանք.


1. Այս այն երիտասարդն է՝ որոյ հանճարոյն
կանխահօտ փթիթները տեսնելով Զմիւռնիոյ
Աղապիւնք՝ հանգանակութիւն ըրին ու զրին
զինքը Մուրատ — Ռաֆայելեան վարժարանը,
և տարուէ տարի կը յգեն իրենց հանգանակու-
թեան պտուղը:

ընկերակիցք իմ, այս գեղեցիկ առիթը ձեռքէ
չփախցընէք: Տեսնե՛ք անգամ մ'ալ 400
զլուփ գործոցները որ կան հոն, զանոնք մի
առ մի դիտելը ուրիշ ժամանակի թողլով,
վասնզի ժամը երեքին կը մօտենայ:

Էլ անցնի թափօրը սքանչելի սրահներէն,
իտալական հրաշակերտներուն վրայ զմայ-
լելով, և կ'իջնէ աշակերտաց գեղարուեստից
սրահ՝ ուր դրուած են զատ զատ անոնց
գծագրութիւնները: Մեզի հետ են բոլոր
Ռոֆեսորները և կը բացատրեն մեզ իւրա-
րաքանչիւր նկարի գնահատելի կողմերը: Ա-
ռանձին սենեկի մէջ զետեղուած են հայ ա-
շակերտաց գծագրութիւնները, և իւրաքան-
չիւրին տակ կը փայլին Գարազաշեան, Ու-
կեան, Թերզեան, անոնները, և ընդունած
մրցանակնին: Պահ մը կը հիանանք հայ ձե-
ռաց և մատանց նրբին ճարտարութեան վրայ,
և յետոյ կ'անցնին Արձանագործութեան
սրահը, ուր դրուած են փափագեանի ձեռագործ
արձանները և շարադրութիւնները: Արդէն
ժամը երեքն է, շնորհակալութեան սիրալիւր
ողջոյններ մատուցանելով՝ Բագաքապետին
քոխանորդին և Ռոֆեսորներուն կը մեկնինք:

Ձեզ եւս, աղիւս ընթերցողք, որ հաճեցաք
ընկերել հետս՝ եթէ մտօք և եթէ երեւակա-
յութեամբ, և յուսամ որ զո՛հ մնացիք, վեր-
ջին ողջոյնս կու տամ, խոստանալով ուրիշ
անգամներ եւ չզրկել զձեզ այսպիսի հան-
դէսներէ, ուր հայ տարրը՝ իւր ճկուն հան-
ճարոյն մագական կարողութիւնը կը հան-
դիսացընէ:

ԱՎԱՆԱՅՏՈՒ ՄԸ



Ա Ձ Դ

Յագմավայրի ընթերցողք ոչ սակաւ անգամ
փափաք յայտնեցին Խմբագրութեանս, որ՝ ինչ-
պէս ժամանակաւ՝ այլ և այլ կարեւոր և օգ-
տակար տնտրազգի լրեր հաւաքածոյ կը հրա-
տարակեր Յագմավայրն, տոյնպէս այժմ՝ փո-
խանախ միայն օտար լրոց՝ հաւաքեր միան-
գամայն ազգային քերթից պարտականութենէն
ինչ ինչ մատուր:

Այդ գիշանալով այդպիսի գովելի փափաքի
մը, ներկայ քերթիս կը սկսիմք համղէս համղիւրից
տիպողսով հետեւեալ տեղեկութիւնքը քաղել: